ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018 թվականի մարտի 21-23-ը Բրատիսլավա գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը

Էմիլ Տարասյան

2. Զբաղեցրած պաշտոնը

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Բրատիսլավա (Սլովակիայի Հանրապետություն), 2018 թվականի մարտի 21-23-ը

4. Հրավիրող կողմը

Համաշխարհային բանկ

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցություն Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային ինովացիոն համաժողովին

6. Քննարկված թեմաները

- Նորարարության դերը տնտեսական աճի ապահովման գործում,
- «Արդյունաբերություն 4.0». արդյունաբերության զարգացման ապագան,
- Նորարարության ոլորտում համագործակցությունը, դոնորների և միջազգային կազմակերպությունների կողմից նորարարության զարգացման ծրագրերի ու նախաձեռնությունների ֆինանսավորման ազդեցությունը,
- Նորարարության ոլորտի ընկերությունների աջակցության մեխանիզմները,
- Տեխնոլոգիաների փոխանցման և հետազոտությունների առևտրայնացման մարտահրավերները. հաջողված մոդելներ և նախաձեռնություններ,
- Հմտությունների զարգացումը՝ աճի և մրցունակության խթանման համար,
- Նորարարության ոլորտի քաղաքականության արդյունավետության գնահատման մեխանիզմները:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային ինովացիոն համաժողովը կազմակերպվել էր Համաշխարհային բանկի կողմից՝ Սլովակիայի և Ավստրիայի կառավարությունների հետ համատեղ:

Համաժողովի նպատակն էր նպաստել ինովացիոն տեխնոլոգիաների ոլորտում տարածաշրջանային համագործակցությանը՝ խթանելով տնտեսական աճն ու նոր աշխատատեղերի ստեղծումը: Համաժողովին մասնակցում էին Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների ինովացիոն տեխնոլոգիաների ոլորտի պետական և մասնավոր կազմակերպությունների, գիտահետազոտական և կրթական հաստատությունների, դոնոր և միջազգային կառույցների ներկայացուցիչները:

Համաժողովին ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ Է. Տարասյանի կողմից ներկայացվեց տեղեկատվություն Հայաստանում ԵՄ «Աջակցություն ՓՄՁ զարգացմանը Հայաստանում» ծրագրի շրջանակում Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերակցության աջակցությամբ ներգրավված տեղական և միջազգային փորձագետների հետ համատեղ մշակվող նորարարության զարգացման նոր ռազմավարության և ճանապարհային քարտեզի վերաբերյալ: Մասնավորապես, ներկայացվեցին ՀՀ-ում նորարարության ոլորտի զարգացման տեսլականը, ՀՀ նորարարական էկոհամակարգի առկա մարտահրավերներն ու դրանց հաղթահարման ուղղությամբ առաջարկվող լուծումները, նորարարության ոլորտի զարգացման ուղիները, մոդելները, գործիքակազմն ու մեխանիզմները:

Նշվեց, որ Հայաստանում նորարարության զարգացման նոր ռազմավարության մշակումը կարևորվում է ՀՀ կառավարության կողմից՝ հաշվի առնելով նորարարության ոլորտի նշանակալի դերակատարումը տնտեսության մրցունակության և արտադրողականության մակարդակի բարձրացման, արտադրության նոր ուղղությունների զարգացման գործում: Այս առումով հատկապես կարևորվում է տարածաշրջանային և միջազգային ինովացիոն էկոհամակարգերին ինտեգրված ազգային ինովացիոն էկոհամակարգի ստեղծումը:

Համաժողովի ընթացքում Է. Տարասյանը հանդիպում ունեցավ Համաշխարհային բանկի Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հարցերով փոխնախագահ Ս. Մյուլերի հետ, որի ընթացքում քննարկվեց Համաշխարհային բանկի հետ իրականացվող ծրագրերի ընթացքը, ինչպես նաև ներկայացվեց ՀՀ-ում նորարարության զարգացման նոր ռազմավարությունը:

Համաշխարհային բանկի Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հարցերով փոխնախագահը նշեց, որ Համաշխարհային բանկը պատրաստ է աջակցելու ՀՀ նորարարության զարգացման նոր ռազմավարության իրականացմանը: Այս ուղղությամբ, պայմանավորվածություն ձեռք բերվեց Համաշխարհային բանկի հետ համագործակցության հետագա քայլերը քննարկել Համաշխարհային բանկի փոխնախագահի հայաստանյան առաջիկա այցի շրջանակում:

Է. Տարասյանը հանդիպում ունեցավ նաև Համաշխարհային բանկի գլխավոր տնտեսագետ Բ. Մալոնիի և Համաշխարհային բանկում Հարավային Կովկասի, Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային տնօրեն Մ. Թեմբոնի հետ: Հանդիպմանը մասնակցում էին նաև Ռազմավարական նախաձեռնությունների կենտրոնի գործադիր տնօրեն Ալեքսանդր Խաչատուրյանը, ՀՀ նորարարության զարգացման նոր ռազմավարության մշակման գործընթացում ներգրավված ազգային փորձագետ, «Ի-Վի Քոնսալթինգ» ընկերության հանրային խորհրդատվության ղեկավար Ս. Հովհաննիսյանը, ոլորտի այլ ներկայացուցիչներ: Քննարկվեցին ՀՀ նորարարության զարգացման ռազմավարությամբ ամրագրված հիմնական մոտեցումներն ու ուղղությունները, որոնց վերաբերյալ ստացվեց Համաշխարհային բանկի ներկայացուցիչների դրական արձագանքը:

Համաժողովի ընթացքում տեղի ունեցավ նաև Է. Տարասյանի հանդիպումը Եվրոպական ներդրումային բանկի փոխնախագահ Վ. Հուդակի հետ, որի ընթացքում քննարկվեցին Եվրոպական ներդրումային բանկի հետ հետագա համագործակցության հնարավորությունները: Մասնավորապես, քննարկվեցին Հայաստանի զարգացման և ներդրումների կորպորացիայում Եվրոպական ներդրումային բանկի կողմից ուղղակի ներդրումների իրականացման, ինչպես նաև տեխնոլոգիական ոլորտի սկսնակ կազմակերպությունների աջակցմանն ուղղված դրամաշնորհների տրամադրման հնարավորությունները:

Եվրոպական ներդրումային բանկի փոխնախագահն առաջարկեց հստակեցնել կազմակերպությունների տեսակներն ու գործունեության ուղղությունները, որոնց գծով նպատակահարմար է համարվում ներդրումային և դրամաշնորհային ծրագրերի իրականացումը: Այս ուղղությամբ, պայմանավորվածություն ձեռք բերվեց Եվրոպական ներդրումային բանկի հետ համագործակցության հետագա քայլերը քննարկել Եվրոպական ներդրումային բանկի փոխնախագահի հայաստանյան առաջիկա այցի շրջանակում:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային ինովացիոն ֆորումն արդյունավետ հարթակ հանդիսացավ Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային երկրների միջև ինովացիոն ոլորտում առկա մարտահրավերների քննարկման, փորձի փոխանակման և համագործակցության հնարավոր ուղիների նախանշման համար:

Համաժողովը լավագույն հնարավորություն հանդիսացավ նաև միջազգային փորձագետների հետ համատեղ ՀՀ-ում մշակվող նորարարության զարգացման նոր ռազմավարության և ճանապարհային քարտեզի քննարկման և առաջարկությունների ներկայացման համար, որոնք ևս հաշվի կառնվեն փաստաթղթի մշակման ընթացքում:

9. Գործուղվողը

Էմիլ Տարասյան

10. Ստորագրությունը, ամսաթիվը

26.03.18թ.